

Հ. Գոյազ-
Գոյազ

Ըստ
Հայաստանի Հանրապետության

1922 թ. 22 Խ
Հիտերալոգ

891.99

9-28

Առանց

Ե Ղ Ի Շ Է Զ Ա Ր Ե Ն Ց

Ս օ մ ա

Ն Ո Ր Վ Է Դ Ե Ա Ն Պ Օ Է Մ

3189

891.99
9-28

Handwritten notes and signatures in Armenian script, including a large signature that appears to be 'Քրիստոսեան'.

786



Ս Օ Մ Ա

Սօմա, դու վերջին ազատութիւն .
Ռիգ-Վեդա

1.

Որպէս քուրմը Դանգէսի,
խելագար քուրմը որպէս—
Կեանքս տւել եմ քեզի
ու երգում եմ քեզ:—
Քեզ եմ երգում այս կարմիր
աշխարհում հիմա,—
քեզ եմ երգում, քաղցը քոյր,
խելագար Սօմա...

2.

Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
ու սիրտըս—գարուն,—
Կեանքս երգ շինած՝ քեզ էի փնտրում
այս շար աշխարհում:—

Ու չէի գտնում, Սօմա, ոչ մի տեղ
քո դէմքը հրէ,—
Բայց ես գիտէի, որ մեռնում է նա,
ով որ քեզ սիրէ...

Ու սիրտս տւած Մահի անուրջին—

մահ էի տենչում,—
բայց տեսայ յանկարծ Քո դէմքը վերջին
այս աղջամուղջում:

Քո դէմքը տեսայ, որպէս սրբազան
մի զոհաբերում,—
քո դէմքը տեսայ աշխարհաստան
այս հրդեհներում.

Ու քեզնով հարբած՝ կանչեցի նրանց
Հրդեհի պարին,—
ու կեանքս տւի, ջերմ ու սրտաբաց,
վառուղ աշխարհին...

3.

Սօմա, ես գիտեմ, մի աղջիկ ես դու,
երկնային մի քոյր,
որ տալիս ես մեր սուրբ ծողիկներին
թոյն, թախիծ ու բոյր:

Սօմա, օ, Սօմա, սրբազան խմիչք,
սրբազան դու սէր.
ոգեւորութեան դու քաղցր զինի,
երկուքի գիշեր...

Արշալոյսների սրբազան արգանդ,
ոգու կաթն Ծիր.
Արևից առաջ դու երկնից անցար,
ոսկի՛ փռեցիր.

— 4 —

օ, սրբազան հարս դու ազատութեան,
դու—Ազատութիւն.
դու—վերջին ցնորք վերջին քաղցրութեան,
դու թախիծ ու թոյն ..

Երկնքից իջած քո ցողն է սերում
բոյսերը բոլոր,—
քոյր, ապրում ես դու մեր սուրբ բոյսերում,
քաղցր ու ահաւոր.

մենք այդ բոյսերից քմիչք ենք շինում,
զինի հրակէզ—
ու այդ սրբազան խմիչքով հարբած—
ցանկանում ենք քեզ:

Վառուում ես, Սօմա, մեր երակներում
Դու, որպէս զինի—
ու քեզնով հարբած ուզում ենք մենք էլ,
որ այս աշխարհում քո կամքը լինի:—

4:

Սօմա, օ, Սօմա, դու ես յաւիտեան
սփոփում մարդուն—
սրբազան ցնորք դու ազատութեան,
դու, թախիծ ու թոյն.—

դու, որ սրտերում փրփրում ես վառ,
հոսում ես արագ—

— 5 —

ու փրփո՛ւր-փրփո՛ւր եփեղով սրտում
վառում ես յանկարծ, դառնում ես կրակ.

Սօ՛մա, օ, Սօ՛մա, օրհնուրի թող այն
վայրկեանը կարմիր աշխարհում այս չար,
եբբ մարդու սրտում առաջին անգամ
հրի փոխեցիր ու Ա՛գնի դարձար.

ու հրդեհ դարձար, ու կրակ, ու հուր,
սրտից ծփալով—անցար աշխարհին,
ու կեանքը այս չար, այս կեանքը տխուր
յանձնեցիր Հրին. .

Ծփում ես ահա մարդկանց սրտերում
ու չար աշխարհում Հրդեհ ես վառել...
—Քոյր, դու ես միայն թխստա օրերում
մեզ մտիթարել...

...Վառել ենք ահա աշխարհը նորից,
ուխտի ենք ելել խեղճ ու խելագար, —
օրհնուրի թող քո անունը նորից,
որ հուր դարձրիր մեր սրտերը քար:
Հո՛ւրդ մեր սրտում թող սուրբ փրփրի.
խմել ենք արգէն, ելել ենք պարի, —
խառնել ենք հիմա իրար կեանք ու մահ.
բորնկեր կրկին ու կրկին անգամ,
վառվիր մեր սրտում, ծրփա արնաքամ,
խելագար Սօմա...

Քոյր, քո գինին մեր սրտերում
մխացել է դար ու դարեր.
Քոյր, քո գինին մեր սրտերում
քանի ոսկի ջահ է վառել.
քանի ոսկի ջահ է վառել
երկրի մուժում,
քանի ոսկի ջահ է վառել
կեանքի փոշում
դա՛ր ու դերեր մեր սրտերում
վառել է վառ —
բայց հրդեհել չի կամեցել
աշխարհը քար: —

...Ո՞վ չի տեսել, երբ իջնում է թանձր գիշեր,
շիրիմներից դուրս են թռչում ոսկի լոյսեր.
փոշիացող ոսկորներից լոյս է ծորում.
— գինիդ է այն, որ չի վառել մարդու օրում...
գինիդ է այն, որ գուր յուզել,
բայց չի վառել.
գինիդ է այն, որ մարդն իր հետ
վա՛ր է տարել... —
Ու գիշերի թանձր մթում,
հրէ մի սուր, —
դուրս է թռչում գերեզմանից —
վառում է դուր...
Սօմա, գինիդ, որով հարբել,

խենթ ենք հիմա —
զար ու դարեր տւել է մեզ
երկունք ու մահ,
մահ է տւել ու գերեզման
հող ու անհուն, —
որ զնւրս թռչի, ազատ վառւի —
գերեզմանում...
Ու չէր վառւում զար ու դարեր
աշխարհը քար.
հիմա — վառւեց... Խենթ ենք մենք էլ —
ու խելագար.
Պար ենք բռնել խելագար,
հրդեհում ենք ու վառում
այն ամենը, ինչ որ կար
հազարամեայ աշխարհում. —
ու կրակը՝ թէ՛ գարկել է սարին,
վառւում է ագահ, —
ու լոյս է տալիս վառւող աշխարհին
դէմքդ հեռակայ...
6.

.. Ու դառնում է մեր շուրջպարը արագ,
ու մեր շուրջպարում — շրդեհի պարում
հէքեթ է կեանքը, ու մարդը — կրակ —

հրթիռ-հրթիռ վեր են թռչում
կեանքերը մեր կարեվէր.

Տիեզերքի աղջամուղջում
ոսկեհրթիռ հրաւէր...

Ամբոխները դրահապատ
ծափ են գարկում ու պարում.
Չան է դարձել ամեն մի մարդ
կրակապատ աշխարհում...

Ու պար բռնած ու խելագար
երգ ենք ասում կրակին,
Նրդեհի մէջ Ինքըդ եկար
զարդարելու կիւրակին...

Կիւրակի է կեանքն հիմա —
Չանագարդւած, կրակուն, —
ու պարում են կեանք ու Մահ,
Սոմա, քո սուրբ կրակում...

7.

Չէյ, հեռաւոր ու մոտաւոր
ընկերներ ու եղբայրներ, —
ձեզ ենք կանչում, դուք չէք լսում —
դւարթ ու սէզ —
եկէք, մտէք շուրջպարը մեր —
եկէք, եկէք...
Դուք չէք տեսնում. Նա է մեր մէջ՝
հրամարմին ու հրակ.

մագերը բոց թափել է վար,
շուրջը— կորուստ ու կրակ.
եկէք, հսկայ պարը մտէք
ամբոխներով անագին—
ու սրտերիդ արիւնը սէգ ողջակիղէք
կրակին...

Ով որ եկաւ— պիտի վտուի
նրա կեանքը մինչև տակ,
պիտի վառուի սիրտը նրա,
որ հուր դառնայ ու կրակ.
կաթ-կաթ պիտի գետին ծորա
կարմիր արիւնը նրա,

որ հրդեհը մեր չըմարի
աշխարհի վրայ,
որ հրդեհը երկինք հասնի,
անեղաշունչ ծաւալի, —
որ խելագար աշխարհը քար
անէանա ու հալի...

—Օ, կոյր է նա, ով չի տեսնում
երկինք հասած կրակը թէժ.
եկէք, եկէք, ով սիրտ ունի
ողջակիղուող ու հրակէզ.
ով որ եկաւ— պէտք է իր հետ
ողջակիղուող մի սիրտ բերի.

եկէք, հսկայ պարը մտէք
աշխարհային հրդեհներին...

Ու ծաւալի թող
աշխարհովը մէկ
հրդեհը մաքրող,
բոցը հրաշէկ:

կեանքը վերանայ,
որ մխում է զուր—
թող մոխիր դառնա
ու անցնի ի զուր:

կեանքը թող մնա
մի հրէ լեզու,
որ մարմին դառնա
խօսքը Աստուծու...

...Ու գալիս են անվերջ, անվերջ
ամբոխները անագին,
որ կեանքը հին ու սնամէջ
ողջակիղեն կրակին:

Ու Հուրն ընկած, անդարձ, անել,
այլուում է կեանքը քար,
ու կրակում պար են բռնել
ամբոխները խելագար:—

Ու կրակը, թէժ, զարկել է սարին,
զարձել է արուն՝ զոհ է սրբազան,—
ու ժպտում է Քո դէմքը աշխարհին
այս հրդեհներում աշխարհասասան...

9.

...Թւում է հիմա կեանքը իմ հոգուն
մի հրէ տեսիլ.
Ինչ լաւ է, Սօմա, որ կեանքի հոգուն
հիմա եմ հասել.
Ինչ լաւ է, Սօմա, որ այս կրակում
վառւում եմ ես էլ:

Կը վառւեմ հիմա, որպէս զոհ կամքիդ
ու զոհաբերում,—
եւ եթէ մարի Հրդեհը այս մեծ,
որ չունի մարում—
դու էլի հազար հրդեհ կը վառես
այս չար աշխարհում:—

Սօմա, սէրը քո թոյն է ու գինի,
բայց քնդքը է այնքան.
Սօմա, կ'սս դու միշտ—բայց անցում եմ ես
ու վաղը չըկամ.
Սօմա, աշխարհում թող կամքըդ լինի
տիեզերական:—

—12—

Կեանքս կըմարի՝ հին, չնչին մի կայծ
քո ոսկի հրում,—
բայց վառւի պիտի սիրաս մոխրացած
քո բոլոր գալիք արշալոյսներում ..



Գրած է Յարիցիւն, 918 ք. Յունիս-Յուլիսին, —
յեղափոխական Կարմիր բանակում

—13—

Ծախում է նոյն հեղինակի
«Ծիածանը» — Կիրիկա, Մոսկա, ՌԶՖԷ.
Գինը մի բուրլի:
Պահեստը «Գիր» պահանջում.

Թիֆլիս, Տպարան «Պրոգրեսս» 1918 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0353270

4907717

97